Հայաստանում գյուղական տարածքների տնտեսական զարգացման հիմնադրամի (www.freda.am) կողմից իրականացվող ֆինանսական աջակցության ծրագրեր

Հայաստանում գյուղական տարածքների տնտեսական զարգացման հիմնադրամն (այսուհետ՝ Հիմնադրամ) իրականացնում է հետևյալ տեսակի ֆինանսավորում.

- Բաժնեմասնակցային ներդրում
- Նախաներդրումային (միջանկյալ) ֆինանսավորում
- Ստորադաս փոխառություն

Պոտենցիալ հաճախորդ Ընկերությունների նկատմամբ Հիմնադրամում գործում են մի շարք նախապայմաններ, որոնց համապատասխանելը կամ մասամբ համապատասխանելը հանգեցնում է ֆինանսավորման վերոնշյալ տեսակներից որևիցե մեկի ընտրության: Տվյալ նախապայմանները հետևյալն են.

- Ընկերությունը գյուղական բնակչության հետ փոխկապված փոքր կամ միջին չափի ագրո բիզնեսով զբաղվող ընկերություն է,
- Ընկերությունը մասնավոր սեփականություն է և գրանցված է որպես Փակ Բաժնետիրական Ընկերություն,
- Ընկերությունը ունի թափանցիկ հաշվապահական հաշվառման համակարգ, ինչպես նաև վարում ու պատրաստում է ֆինանսական հաշվետվություններ համաձայն ՖՀՄՍ (դա հնարավոր է իրականացնել հաշվապահական հաշվառման գործառույթը այլ ընդունելի անկախ հաշվապահական ընկերությանը հանձնարարելով կամ ունենալով ընդունելի ներքին համակարգ),
- Ընկերության ֆինանսական հաշվետվությունները ենթարկվել են աուդիտի ներդրման դիմումը ներկայացնելու պահից առնվազն նախորդ երկու տարվա համար և ընկերությունն ունի առանց վերապահման կարծիք առնվազն մեկ տարվա համար,
- Ընկերությունը ունի հստակ և թափանցիկ կանոնների, գործելակերպի և գործընթացների համակարգ, որոնցով այն տնօրինվում է և վերահսկվում, ինչպես նաև ունի տնօրենների խորհուրդ, որը բավականաչափ անկախ է ընկերության ղեկավարությունից, որպեսզի իսկապես ներկայացնի բաժնետերերի շահերը,
- Ընկերությունը ունի առնվազն երեք տարվա փորձ և ներդրման դիմումը ներկայացնելու պահին նախորդող երեք տարվա կտրվածքով առնվազն երկու տարին գործել է շահույթով:

Այն դեպքում, երբ բոլոր նախապայմանները կատարված են, հնարավոր է դիտարկել Ընկերությունում բաժնեմասնակցային ներդրման հնարավորությունը:

Եթե Ընկերությունը ամբողջությամբ չի կատարել բոլոր նախապայմանները (օրինակ Ընկերությունը կարող է դիմելու պահին գրանցված լինել որպես Սահմանափակ պատասխանատվությամբ Ընկերություն, կարող է չունենալ թափանցիկ հաշվապահական հաշվառման համակարգ, իր ֆինանսական հաշվետվությունները կարող են ենթարկված չլինել աուդիտի, Ընկերությունը կարող է ունենալ ավելի քիչ, քան երեք տարվա փորձ և այլն), բայց ի վիճակի է և պարտավորվել է լրացնել այդ բացը, ապա կարող է դիտարկվել Ընկերությանը նախաներդրումային (միջանկյալ) ֆինանսավորման տրամադրման հնարավորությունը:

Բացի բաժնեմասնակցային ներդրումից և նախաներդրումային (միջանկյալ) ֆինանսավորումից, Հիմնադրամը կարող է տրամադրել նաև ստորադաս փոխառություն, որը, սակայն, կարող է միայն տրամադրվել կամ բաժնեմասնակցային ներդրման հետ միաժամանակ կամ բաժնեմասնակցային ներդրումից հետո:

Հիմնադրամի կողմից իրականացված բաժնեմասնակցային ներդրման կամ նախաներդրումային (միջանկյալ) ֆինանսավորման գումարը որևէ հաճախորդ Ընկերությունում չի կարող պակաս լինել 100,000 ԱՄՆ դոլարին համարժեք գումարից և չի կարող գերազանցել 500,000 ԱՄՆ դոլարին համարժեք գումարը: Ստորադաս փոխառության ընդհանուր գումարը չի կարող գերազանցել միևնույն Ընկերությունում կատարված բաժնեմասնակցային ներդրման 50 տոկոսը: